Հայաստանի ՄՌ Ասոցիացիա

«Նոր Էջ»

կորպորատիվ սոցիալական պատասխանատվության
նախագծի ամփոփ ամբողջական հաշվետվություն

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Նոր էջ» նախագծի և արդյունքների մասին.....3
Նախագծի ֆինանսավորումը.....8

«Նոր Էջ» նախագծի և արդյունքների մասին

«ՄՌ Ասոցիացիա» ՀԿ-ի հեղինակային «Նոր Էջ» նախագիծը մեկնարկեց 2020թ. մարտական գործողությունների ավարտից հետո: Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների կազմակերպչական աշխատանքներից հետո 2021թ. հունվարին սկսվեցին բուն աշխատանքները:

Նախագծի **նպատակն** էր պատերազմի մասնակիցներին և զինհաշմանդամներին սեփական կարողությունները զարգացնելու, հստակ գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու հնարավորություն ընձեռել՝ այդպիսով նպաստելով լիարժեք աշխատանքային կյանք վերադառնալուն:

Նախագծի մեկնարկից հետո առաջին երեք ամսվա ընթացքում իրականացվեց շահառուների և հետաքրքրված գործատուների կարիքների մանրամասն գնահատում: Արդյունքում, **հավաքվեց շահառուների վերաբերյալ խորքային բազա**, որը բացի ժողովրդագրական տվյալներից պարունակում է նաև տեղեկատվություն երիտասարդների կրթության, հետաքրքրությունների, կարիքների, ունակությունների և կարողությունների մասին:

Մանրամասն հետազոտության նպատակն էր շահառուների ձգտումները և կարողություններն ուսումնասիրելը և գործատուների ներուժը գնահատելը:

Առաջին թիրախային խմբի (մարտական գործողությունների մասնակիցների) համար առաջադրված էին հետևյալ խնդիրները.	բացահայտել կրթական և մասնագիտական պատրաստվածությունը,
	ուսումնասիրել նախկին աշխատանքային փորձը,
	պարզել հմտությունների, լեզուների, արհեստի կամ արվեստի իմացությունը,
	պարզել նախասիրությունները, հակումները, ձգտումները,
	բացահայտել զարգացման հնարավոր ուղղությունները:
Երկրորդ թիրախային խմբի (գործատուների) համար առաջադրված էին հետևյալ խնդիրները.	պարզել առաջիկա 6 ամիսների ընթացքում սպասվող թափուր աշխատատեղերի քանակը, բնույթը, վայրը, ժամկետները,
	պարզել յուրաքանչյուր աշխատատեղի համար պահանջվող մասնագիտական գիտելիքների և հմտությունների շրջանակը,
	հաշվառել հաշմանդամություն ունեցող անձանց համար դիտարկելի աշխատատեղերի քանակը, բնույթը և պայմանները:

Շահառուների և գործատուների կարիքների գնահատման համար կիրառվել է CAWI (համակարգչի օգնությամբ առցանց հարցազրույց) մեթոդը: Նախագծին գրանցված մասնակիցների թիվը 2000-ից ավել էր, որից **1620-ն անցան կարիքների գնահատում,** իսկ գործատուների գնահատումն անցել են շուրջ 150 ընկերություններ: Դրանից բացի նաև հավաքվել են շուրջ 180 մասնագետների տվյալներ, որոնք պատրաստակամություն են հայտնել աշխատել շահառուների հետ որպես դասընթացավար:

Շահառուների **90%-ից ավելին կազմել են 2020թ. պատերազմի մասնակիցները**, սակայն փոքր խմբերով կային տարբեր մարտական գործողությունների մասնակցած և զինվորական ծառայության ընթացքում վիրավորում ստացած և/կամ հաշմանդամություն ձեռք բերած երիտասարդներ, այդ թվում՝ 2016թ. ապրիլյան, 2022թ. սեպտեմբերի գործողություններ և այլն:



Նկ. 1. Մասնակիցների բաշխվածությունն ըստ մարզերի

Նախագծի գործունեությունը ծավալվեց **ՀՀ ողջ տարածքում ու Արցախում**: Շահառուների մեծ մասը՝ 34%-ը, մայրաքաղաքից էր: Հաջորդ տեղում Շիրակի և Կոտայքի մարզերն էին՝ 11% և 10%: Մյուս մարզերից և Արցախից շահառուների թվաքանակը տատանվում էր 3-8%-ի միջակայքում:

Հարկ է նշել, որ գործունեության ընթացքում թիմը համագործակցել է **շուրջ 300** տարբեր ընկերությունների, կազմակերպությունների, անհատների և հիմնադրամների հետ, որոնցից **ակտիվորեն ներգրավվել են 144-ը:**

Նույն խմբի շահառուներին ուղղված ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցությանը հատուկ ուշադրություն հատկացվեց:



Նկ. 2. Ակտիվ գործընկերների բաշխվածությունը

Նախագծի բուն գործունեությանը զուգահեռ 2022թ. իրականացվել են նաև ընթացիկ հետազոտություններ երկու ուղղություններով, որոնցից մեկը պատերազմի մասնակցությունը հավաստող փաստաթղթերում առկա խնդիրների մասին էր, մյուսը՝ վիրավորում ստացած և կամ հաշմանդամություն ունեցող անձանց դժվարությունների բացահայտմանն ուղղված: Բացի այդ, իրականացվել է «Նոր Էջ» նախագծի գնահատման ու շահառուների փոփոխված կարիքների և ակնկալիքների ծավալուն ուսումնասիրություն:

Հարկ է նշել, որ 2022-2023թթ. ընթացքում նոր շահառուների ներգրավման ուղղությամբ որևէ նպատակային աշխատանք չի արվել. դիմել են նախագծի շահառուների ընկերները, բարեկամները և ծանոթները՝ հենց շահառուների խորհրդով և ուղղորդմամբ: 2022թ. ընթացքում ծրագրին միացել է ամսական միջինում 24 նոր շահառու, իսկ 2023թ. ընթացքում՝ ամսական 22, ինչը վկայում է ծրագրի արդյունավետության և կայուն հեղինակության մասին:

Կարևոր է առանձին շեշտադրել, որ մեկ անգամ նախագծի շահառու դարձած երիտասարդների մեծամասնությունը դուրս չեն եկել նախագծից, չնայած նրանց ակտիվությունը կարող էր ունենալ պարբերական բնույթ՝ կախված տարբեր հանգամանքներից:

2023թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ նախագծի շրջանակներում կազմակերպվել և իրագործվել է **262** վճարվող և անվճար դասընթաց/ծրագիր/վեբինար, որի արդյունքում **1286 շահառու** կատարելագործել են իրենց հմտությունները կամ ստացել նոր մասնագիտություն: Ինչպես նաև, 60-ից ավել երիտասարդ ընդունվել է աշխատանքի: Ընդ որում, 33-ից ավել շահառու մասնակցել է առաջնորդության թեմային նվիրված համաժողովների, որտեղ միջազգային ճանաչում ունեցող խոսնակներին լսելու և նրանց հետ շփվելու հնարավորություն է ունեցել:



Նկ. 3. Մասնակիցների թվաքանակի բաշխվածությունն ըստ դասընթացների ոլորտների

Բացի դասընթացները, 130 շահառու մասնակցել է աշխատանք գտնելուն ուղղված գործընթացներին (տեղեկատվության տրամադրում, CV կազմելու խորհրդատվություն, գործատուների ու շահառուների միջև կապի հաստատում և այլն): Իսկ շահառուներից 123-ին տրամադրվել է խորհրդատվություն ուսման վարձի փոխհատուցման դիմելու համար:

Շահառուների զգալի մասի հետ անցկացվել են նաև մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ, այդ թվում՝ ծրագրեր, հարցազրույցներ:

Կարևորելով պատերազմին մասնակցած երիտասարդների խնդիրների վերհանումը՝ նախագծի թիմը մշակեց և իրականացրեց հետազոտական աշխատանք երկու ուղղություններով:

1. Պատրաստվել է զեկույց պատերազմի մասնակցությունը հավաստող փաստաթղթերում առկա խնդիրների վերաբերյալ, որը հիմնված է նախագծի գործունեության ընթացքում շահառուներից ստացված տեղեկատվության և հավաքագրված փաստաթղթերի վերլուծության վրա: Զեկույցը ներկայացրել ենք ՀՀ Պաշտպանության նախարարություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն:

2. Վիրավորում ստացած և կամ հաշմանդամություն ունեցող անձանց դժվարությունների բացահայտմանն ուղղված հետազոտության նպատակն էր դուրս բերել հստակ խնդիրներ: Այդ խնդիրներն անմիջականորեն ազդում են երիտասարդների կենսագործունեության, մոտիվացիայի, հիշողության, ուշադրության կենտրոնացման, կրթական և աշխատանքային գործունեության վրա: Իրականացվել է քանակական և որակական հետազոտություն հարցաթերթի

և հարցազրույցների մեթոդիկաներով: Ինչպես նշում են շահառուները, նրանք բախվում են երկու խումբ խնդիրների, որոնցից մեկը վերաբերում է առօրյա կյանքին, մյուսը՝ պետական կառույցների հետ հարաբերություններին: Հիմնական խնդիրներն ու մտավախությունները վերաբերում են աշխատանքային պայմաններին, գործատուների ոչ ճկուն լինելուն, միջանձնային հարաբերություններում խտրականությանը, հասարակության կողմից ծայրահեղացված գերխնամքին և/կամ անտարբերությանը, այլ անձանց կողմից խարանավորմանը և իրենց անձնական սահմանների խախտմանը: Վերոնշյալ խնդիրները հաճախ համակցված են և շահառուներից յուրաքանչյուրը բախվում է մեկից ավել խնդիրների: Այս խնդիրներն այնքան սուր են արտահայտված, որ հաճախ դրա պատճառով մարտական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած և առողջական խնդիրներ ձեռք բերած անձինք հրաժարվում են իրենց հասանելիք աջակցությունից և իրենց իրավունքների իրացումից:

Նախագիծը հաջողվեց. արձագանքների վերլուծությունը փաստում է, որ նախագիծը մասնակիցների մեծ մասի ընդհանուր կենսագործունեության և աշխարհընկալման վրա էական դրական ազդեցություն է թողել:

Նախագծի հաջողության մասին են վկայում քանակական արդյունքները, շահառուներից ամեն օր ստացվող արձագանքները և նոր դիմորդների չընդհատվող հոսքը գործունեության ողջ ընթացքում: Կարող ենք պնդել, որ «Նոր Էջ»-ը, որպես կրթական նախագիծ, ձեռք է բերել ճանաչում և շահառուների վստահությունը:

Ամփոփելով նախագծի գործունեության ընթացքում իրականացված աշխատանքները՝ կարող ենք արձանագրել հետևյալ արդյունքները.

- ✓ կազմակերպված և իրականացված մասնագիտական, փափուկ և կոշտ հմտությունների զարգացման, մասնագիտական կողմնորոշման բազմաթիվ դասընթացներ և ծրագրեր,
- ✓ համագործակցություն տարբեր հասարակական կազմակերպությունների, ընկերությունների, պետական կառույցների և անհատների հետ,
- ✓ նոր շահառուների չընդհատվող հոսք նախագծի ողջ գործունեության ընթացքում,
- ✓ շահառուների գոհունակության և վստահության բարձր ցուցանիշ,
- ✓ դաշտի կարգավորմանն ուղղված աշխատանքներ՝ հետազոտությունների և զեկույցների տեսքով:

Նախագծի ֆինանսավորումը

2021թ. «Նոր էջ» նախագծի հիմնական նվիրատուն դարձավ «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ-ն, իսկ 2022թ. որպես հիմնական նվիրատու հանդես եկավ «Երևան իմ սեր» հիմնադրամը: Նաև զուգահեռ իրականացվեց դրամահավաք «ՌեԱրմենիա» բարեգործական հիմնադրամի հարթակում:

Բացի այդ, 2022թ. «Դիակոնիա» հիմնադրամն առանձին ֆինանսավորեց մեր շահառուների ուսումը «Պանարմենիան» մեդիա դպրոցում:

2023թ. շարունակվեց նախագծի ֆինանսավորումը «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից: Նույն թվականին նախագիծը ֆինանսավորում ստացավ նաև «FASF - Friends of the Armenian Soldier and Family» («Հայ զինվորի և ընտանիքի ընկերներ») հիմնադրամի կողմից:

Ընդհանուր առմամբ տրամադրված ֆինանսական միջոցներն օգտագործվել են երեք հիմնական հոդվածով, որոնք ունեն իրենց ենթահոդվածները.

1. նախագծի մեկնարկային հետազոտություններ, կարիքների գնահատում, դասընթացների և կրթական ծրագրերի կազմակերպում, որը կազմում է ընդհանուր ծախսի 64%-ը,
2. նախագծի տեսանելիության և իրազեկվածության բարձրացում, որը կազմում է ընդհանուր ծախսի 8%-ը, (նախագծի գործունեության թափանցիկության ապահովումը, տեսանելիությունը և հաշվետվողականությունը),
3. այլ ծախսեր, որոնք կազմում են ընդհանուր ծախսի 28%-ը (ներառում է մարդկային ռեսուրսները, նյութածախսը, վարչական տարբեր ծախսերը, պարբերական գնահատումներն ու մշտադիտարկումը, ինչպես նաև պետական հարկերը):

Ստորև ներկայացված է նախագծի ֆինանսական շարժն ըստ տարեթվերի:

	Նվիրատվություն	Փաստացի մուտք (ՀՀԴ)
2021 թ.	Ֆիլիպ Մորրիս Արմենիա	45,408,000
	Ընդամենը	**45,408,000**
	Ելք	**Փաստացի ծախս (ՀՀԴ)**
	Մարդկային ռեսուրսներ	2,520,000
	Պետական հարկեր	840,000
	Շահառուների կարիքների հետազոտություն	3,168,000
	Գործատուների կարիքների հետազոտություն	2,736,000
	Տվյալների վերլուծություն, քարտեզագրում, ծրագրի մշակում	2,064,000
	Մասնագիտական կողմնորոշում, կրթական ծրագրեր և դասընթացներ	19,104,000
	Հաղորդակցում, տեսանելիության բարձրացում և իրազեկում	4,800,000
	Այլ վարչական ծախսեր	10,176,000
	Ընդամենը	**45,408,000**
	Մնացորդ	**0**

2022 թ.	Նվիրատվություն	Փաստացի մուտք (ՀՀԴ)
	«ՌեԱրմենիա» բարեգործական հիմնադրամ	5,200,000
	Երևան իմ սեր հիմնադրամ	30,000,000
	Ընդամենը	**35,200,000**
	Ելք	Փաստացի ծախս (ՀՀԴ)
	Մարդկային ռեսուրսներ	3,996,486
	Պետական հարկեր	3,379,520
	Մասնագիտական կողմնորոշում, կրթական ծրագրեր և դասընթացներ	15,917,192
	Հաղորդակցում, տեսանելիության բարձրացում և իրազեկում	1,200,000
	Այլ վարչական ծախսեր	1,252,660
	Ընդամենը	**25,745,858**
	Մնացորդ	**9,454,142**

2023 թ.	Նվիրատվություն	Փաստացի մուտք (ՀՀԴ)
	Երևան իմ սեր հիմնադրամ (ներառյալ 2022թ. մնացորդը)	16,954,142
	FASF	9,807,315
	Ընդամենը	**26,761,457**
	Ելք	Փաստացի ծախս (ՀՀԴ)
	Մարդկային ռեսուրսներ	2,537,156
	Պետական հարկեր	1,526,552
	Մասնագիտական կողմնորոշում, կրթական ծրագրեր և դասընթացներ	19,583,925
	Հաղորդակցում, տեսանելիության բարձրացում և իրազեկում	1,885,840
	Այլ վարչական ծախսեր	1,304,411
	Ընդամենը	**26,837,884**
	Մնացորդ	**- 76,427**

Ընդամենը մուտք 2021 - 2023 թթ. (ՀՀԴ)	97,915,315
Ընդամենը ելք 2021 - 2023 թթ. (ՀՀԴ)	97,991,742
Տարբերություն (ՀՀԴ)	- 76,427 *

* Տարբերությունը վճարվել է մեր միջոցներից: